# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 19-Ա

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայասատանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի 2019 թվականի մայիսի 17-ի N01/8/03014-2019 գրությունը, Արմավիրի մարզի Այգեկ համայնքում ցանքատարածությունների փաստացի հաշվառում իրականացնելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահ Գայանե Սարգսյանին՝ 2019 թվականի հունիսի 1-ի դրությամբ կատարել փաստացի ցանքատարածությունների հաշվառում, փաստաթղթերը մինչև 2019 թվականի հունիսի 5-ը ներկայացնել համայնքի ղեկավարին և ազգային վիճակագրական ծառայության Արմավիրի մարզային գործակալություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ՄԱՅԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

2019թ. Մայիսի 21
գ.Այգեկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեկ
համայնքի ղեկավարի
2019 թվականի մայիսի 21-ի N19-Ա որոշման

# ԿԱԶՄ

## ՑԱՆՔԱՍՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ - | Սարգսյան Գայանե - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար |
| Հանձնաժողովի անդամներ - | Հովհաննիսյան Գոհար - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկի համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ |
| | Նազարյան Ռոբերտ - | ՀՀ Արմավիրի մարզի Այգեկ համայնքի բնակիչ, ջրբաշխ |

ԱՅԳԵԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ _______________ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 20-Ա

## ՍԱՆԱՍԱՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Սանասար Կարապետյանի 2019 թվականի մայիսի 21-ի դիմումը՝ շինարարության թույլտվություն տալու մասին՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Սանասար Կարապետյանին՝ սեփականության իրավունքով պատկանող 1-ին փողոց 1-ին փակուղի 8 հասցեում գտնվող, 04-009-0005-0007 կադաստրային ծածկագրով տնամերձ հողամասում բնակելի տուն կառուցելու նպատակով՝ համաձայն հաստատված նախագծի, տալ շինարարության թույլտվություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

2019 թ. մայիսի 23
գ.Այգեկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

23 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 09-Ա

## ՄԱՅԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, 159-րդ հոդվածի առաջին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N1384-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Մայիս Աբրահամյանի 2019 թվականի մայիսի 23-ի դիմումը՝ ***կարգադրում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ղեկավարի տեղակալ Մայիս Աբրահամյանին 2019 թվականի մայիսի 27-ից մինչև 2019 թվականի հունիսի 28-ը ներառյալ տրամադրել ամենամյա արձակուրդ՝ 2018 թվականի օգոստոսի 18-ից մինչև 2019 թվականի օգոստոսի 18-ն ընկած ժամանակահատվածի համար, ընդամենը 24 աշխատանքային օր (20 աշխատանքային օր նվազագույն արձակուրդ ավելացրած 4 լրացուցիչ աշխատանքային օր):
2. Մայիս Աբրահամյանին համարել աշխատանքի մեջ 2019 թվականի հուլիսի 1-ից:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

20 19 թ. Մայիսի 23
գ.Այգեկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

24 ՄԱՅԻՍԻ 2019թվականի N 10-Ա

## <<ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ>> ԹԵՄԱՅՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների պլան>>-ի 8.2.2 կետի պահանջների, իմ ղեկավարությամբ Այգեկ համայնքում 06.06.2019 թվականին անցկացվելու է շտաբային ուսումնավարժություն՝ <<Ուժեղ երկրաշարժի առաջացման դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը>> թեմայով:

Նշված ուսումնավարժությանը ժամանակին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով՝ ***կարգադրում եմ.***

1. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ նշանակել համայնքի ղեկավարի տեղակալ Մայիս Աբրահամյանին:
2. Ուսումնավարժությունում ներգրավվել՝
   - համայնքի ղեկավար կազմին,
   - համայնքի ԱԻ հանձնաժողովին,
   - համայնքի տարհանման հանձնաժողովին,
   - համայնքի կազմավորումների հրամանատարներին:
3. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալին՝
   - համագործակցել Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ՝ ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի կազմման հարցերում,
   - մինչև 27.05.2019 թվականը մշակել և իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը,
   - ապահովվել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 31.05.2019 թվականը ներկայացնել հաստատման,
   - կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավված ուժերի նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի,
   - ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել մինչև 04.06.2019 թվականը:
4. Սույն հայտարարությունը հայտարարել՝ ըստ առնչության:
5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

**Համայնքի ղեկավար՝** ______________ **ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

2019թ.մայիսի 24
գ.Այգեկ